ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-20, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«17» սեպտեմբերի 2020թվականի N 81-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387–Ն որոշման դրույթներով, ***որոշում եմ.***

1. ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Վաղատուր գյուղում գտնվող 0,5 հա հողատարածքը (կադաստրային ծածկագիր 09-090-0110-0001) հասցեավորել և տրամադրել ՀՀ Սյունիքի մարզ, Տեղ համայնք, գյուղ Վաղատուր Կյուրուվեցու ձոր թաղամաս թիվ 1 հասցե:
2. Կատարել համապատասխան գրանցում ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Սյունիք մարզային ստորաբաժանումում:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ **Ն. Շադունց**

2020թ. սեպտեմբերի 17
գյուղ Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-72, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«18» սեպտեմբերի 2020թվականի N 82-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 48-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 45-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սոցիալական և բնակարանային հարցերի ուսումնասիրության հանձնաժողովի 2020թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 2 արձանագրությունը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի բնակիչների տրամադրել դրամական օգնություն, համաձայն հավելվածի.
2. Գումարը հատկացնել համայնքի բյուջեի սոցիալական պաշտպանություն բաժնի 4729 հոդվածով:
3. Աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ **Ն. Շադունց**

2020թ. սեպտեմբերի 18
գյուղ Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-72, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«18» սեպտեմբերի 2020թվականի N 83-Ա

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ 2020-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1233-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 37-րդ կետով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 80-րդ և 138-րդ կետերով, Տեղի համայնքապետարանի ներքին աուդիտի կոմիտեի 2020 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 01/20 նիստի արձանագրությունը, ***որոշում եմ.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի ներքին աուդիտի 2020–2022 թվականների ռազմավարական ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի ներքին աուդիտի 2020 թվականի տարեկան ծրագիրը՝ համաձայն N 2 հավելվածի:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ **Ն. Շադունց**

2020թ. սեպտեմբերի 18
գյուղ Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-72, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«25» սեպտեմբերի 2020թվականի N 84-Ա

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՍՈՒՐԵՆԻ ՂՈՒՇՈՒՆՑԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքանակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 22.1 հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596 հաստատված կարգի 9-րդ կետով, հիմք ընդունելով Անուշավան Ղուշունցի 2020 թվականի սեպտեմբերի 24-ի հայտ, ***որոշում եմ.***

1. Անուշավան Ղուշունցին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետա-հատակագծային առաջադրանք)՝ ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ գյուղի Ս. Բարխուդարյան թիվ 1/3/2/1 հասցեում վարսավիրանոցի կառուցման համար:
2. Անուշավան Ղուշունցը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ **Ն. Շադունց**

2020թ. սեպտեմբերի 25
գյուղ Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-20, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«16» հոկտեմբերի 2020թվականի N 85-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետությանօրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 45-Ն որոշման 8-րդ կետի, ***որոշում եմ.***

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2020 թվականի բյուջեում կատարել հետևյալ վերաբաշխումը.

1. Նվազեցնել՝
   1) կառավարման մարմնի պահպանման ծախսերի 4111 (աշխատավարձ) հոդվածը 1294,0 հազ. ՀՀ դրամով,
   2) 4221 (ներքին գործուղում) հոդվածը՝ 200,0 հազ. դրամով,
2. Ավելացնել՝
   1) կառավարման մարմնի պահպանման ծախսերի 4234 (տեղեկատվական ծառայություններ) հոդվածը 100,0 հազ. ՀՀ դրամով,
   2) ճանապարհային տրանսպորտ բաժնի 4264 (տրանսպորտային նյութեր) հոդվածը՝ 200,0 հազ. դրամով,
   3) ընդհանուր բնույթի այլ դասերին չպատկանող բաժնի 4637 (ընթացիկ դրամանաշնորհ ՊՈԱԿ-ներին) հոդվածը՝ 837,0 հազ. դրամով,
3. Նախատեսել՝ նախադպրոցական կրթություն բաժնի 4239 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածով 357,0 հազ. ՀՀ դրամ:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ **Ն. Շադունց**

2020թ. հոկտեմբերի 16
գյուղ Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-20, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«27» նոյեմբերի 2020թվականի N 86-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387–Ն որոշման դրույթներով և հիմք ընդունելով Կոստանդ Լալաբեկյանի 27.11.2020թ. դիմումը, ***որոշում եմ.***

1. ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ գյուղում գտնվող 09-101-049-014 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը հասցեավորել և տրամադրել ՀՀ Սյունիքի մարզ, Տեղ համայնք, գյուղ Տեղ 19-րդ փողոց թիվ 2 հասցե:
2. Կատարել համապատասխան գրանցում ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Սյունիք մարզային ստորաբաժանումում:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ **Ն. Շադունց**

2020թ. նոյեմբերի 27
գյուղ Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-20, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«27» նոյեմբերի 2020թվականի N 87-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետությանօրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 45-Ն որոշման 8-րդ կետի, ***որոշում եմ.***

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2020 թվականի բյուջեում կատարել հետևյալ վերաբաշխումները.

1. Նվազեցնել՝ 4511 (սուբսիդիա) հոդվածը 10070,5 հազ. ՀՀ դրամով, որից՝
   1) Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ այլ դասերին չպատկանող բաժնում՝ 1250,0 հազ. ՀՀ դրամով,
   2) Գյուղատնտեսություն բաժնում՝ 1300,0 հազ. ՀՀ դրամով,
   3) Ջրամատակարարում բաժնում՝ 450,0 հազ. ՀՀ դրամով,
   4) Նախադպրոցական կրթություն բաժնում՝ 7070,5 հազ. ՀՀ դրամով,
2. Ավելացնել՝ 4511 (սուբսիդիա) հոդվածը 3000,0 հազ. ՀՀ դրամով, որից՝
   1) Ճանապարհային տրանսպորտ բաժնում՝ 1700,0 հազ. ՀՀ դրամով,
   2) Աղբահանություն բաժնում՝ 1300,0 հազ. ՀՀ դրամով,
3. Նախատեսել՝ ջրամատակարարում բաժնի 4657 (այլ կապիտալ դրամաշնորհներ) հոդվածով 7070,5 հազ. ՀՀ դրամ:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ **Ն. Շադունց**

2020թ. նոյեմբերի 27
գյուղ Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-20, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«01» դեկտեմբերի 2020թվականի N 88-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387–Ն որոշման դրույթներով և հիմք ընդունելով Սլավիկ Օհանջանյանի 01.12.2020թ. դիմումը, ***որոշում եմ.***

1. ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Քարաշեն գյուղում գտնվող 09-111-013-005 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը հասցեավորել և տրամադրել ՀՀ Սյունիքի մարզ, Տեղ համայնք, գյուղ Քարաշեն 8-րդ փողոց թիվ 19 հասցե:
2. Կատարել համապատասխան գրանցում ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Սյունիք մարզային ստորաբաժանումում:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ **Ն. Շադունց**

2020թ. դեկտեմբերի 01
գյուղ Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-72, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«01» դեկտեմբերի 2020 թվականի N 89-Ա

ԴԱՎԻԹ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՇԵԳՈՒՆՑԻՆ ՍԵՓԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ /ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ/ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ և հաշվի առնելով Դավիթ Վարուժանի Շեգունցի՝ համայնքի ղեկավարին ուղղած 2020 թվականի սեպտեմբերի 11-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ գյուղի 25-րդ փողոց թիվ 3 հասցեում գտնվող, Դավիթ Վարուժանի Շեգունցին սեփականության իրավունքով պատկանող 0,1536 հա բնակավայրերի հողերի կատեգորիա՝ «բնակելի կառուցապատման հողեր» գործառնական նշանակության հողամասում (ծածկագիր 09-101-0041-0025) 271,5 քմ արտաքին մակերեսով (ներքին մակերես՝ 213,0քմ) ինքնակամ կառուցված շինությունը (բնակելի տունը), որի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ճանաչել օրինական և համարել Դավիթ Վարուժանի Շեգունցի(նք 008418196 տրված 27.06.2016թ 032-ի կողմից) սեփականությունը:
2. Սահմանել, որ հողամասի սեփականատերը.
   1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Տեղ համայնքի բյուջեի 900285001674 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի 22-րդ կետի ա) ենթակետով սահմանված վճարը՝ ինքնակամ կառուցված շինության (բնակելի տան) համար՝
   187335 (հարյուր ութանասունյոթ հազար երեք հարյուր երեսունհինգ) ՀՀ դրամ (271,5քմ x 10 000 դրամ x 0.069 = 187335):

2) իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:
3) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

3. Սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:
4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տեղ համայնքի ղեկավարին՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
5. Սույն որոշման կատարման կազմակերպումը, պատասխանատվությունը և հսկողությունը դնել Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ **Ն. Շադունց**

2020թ. դեկտեմբերի 01
գ. Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-72, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«08» դեկտեմբերի 2020 թվականի N 90-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22.1-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով, հաշվի առնելով <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի 2020թվականի դեկտեմբերի 3-ի հայտը, ***որոշում եմ.***

1. <Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ Սյունիքի մարզի Քարաշեն գյուղի ցածր ճնշման ստորգետնյա գազատարի վթարային հատվածների վերատեղադրում և միջին ճնշման ստորգետնյա գազատարի մեկուսիչ ծածկույթի վերանորոգման համար:
2. <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ն պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ **Ն. Շադունց**

2020թ. դեկտեմբերի 08
գ. Տեղ